ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

   Կարեն Հովսեփյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էներգետիկայի վարչության վերականգնվող էներգետիկայի բաժնի գլխավոր մասնագետ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ**

   ՉԺՀ, (ք. Սուճոու), 2025թ. մայիսի 20-ից մինչև հունիսի 5-ը ներառյալ

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

   Սուճոուի Գիտության և Տեխնոլոգիաների համալսարան (Suzhou University of Science and Technology)

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

   Մասնակցություն 2025թ. մայիսի 22-ից մինչև հունիսի 4-ը ներառյալ կայացած ՉԺՀ-ում (ք. Սուճոու), «Զարգացող երկրների համար ցածր ածխածնային զարգացում, էներգիայի պահպանում և արտանետումների կրճատում» խորագրով դասընթացին: Դասընթացի հիմնական նպատակն էր ընդլայնել զարգացող երկրների մասնակիցների գիտելիքները և հմտությունները կլիմայական տեխնոլոգիաների խթանման, կիրառման և տիրապետման վերաբերյալ:

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

   Բացման խոսքում կազմակերպիչների կողմից կարևորվել են գործադրվող ջանքերը ցածր ածխածնային զարգացման ոլորտում քաղաքականության բարելավման և նախանշված նպատակներին հասնելու հարցում:
   Դասընթացի ընթացքում դասախոսություններ են կարդացել տեղի և հրավիրված դասախոսները:
   Մասնակցության ձևաչափով չէր նախատեսվում շնորհանդեսի ներկայացում:
   Մասնակցում էին Հայաստանի, Ղազախստանի, Եգիպտոսի, Աֆղանստանի, Մալդիվների և այլ երկրների համապատասխան գերատեսչությունների և այդ գերատեսչությունների ներքո գործող կազմակերպությունների ներկայացուցիչներ:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

   Դասընթացի շրջանակներում կազմակերպվել են այցեր դեպի «Suzhou New District Hi-Tech Industrial» ՍՊ ընկերություն և «Everbright Environment» կազմակերպություն: «Suzhou New District Hi-Tech Industrial» ՍՊ ընկերությունը զբաղվում էր կեղտաջրերի մաքրազերծման, իսկ «Everbright Environment» կազմակերպությունը՝ կոշտ կենցաղային թափոնների կառավարման հարցերով:

Դասընթացի ավարտին կազմակերպիչների կողմից շեշտվել է կարևորությունը ապահովելու սույն նախաձեռնության շարունակականությունը՝ երկկողմ և բազմակողմ համագործակցությունը խորացնելու անհրաժեշտությունը:
Դասընթացի ավարտին տրվել է վկայական (կցվում է):

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Շարունակել ՉԺՀ կողմից կազմակերպվող կայուն զարգացմանն առնչվող նախաձեռնություններին ակտիվ մասնակցությունը:

ՀՀ ՏԿԵՆ էներգետիկայի վարչության
վերականգնվող էներգետիկայի բաժնի
գլխավոր մասնագետ Կարեն Հովսեփյան